

ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ  
ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՔՆԵՐԸ

## I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն իրավական ակտով սահմանվում են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

2. Սույն իրավական ակտի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների կատարման ընթացքում հողի բերրի շերտի հանման և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի օգտագործման վրա:

## II. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն իրավական ակտում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

1) *հող*՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

2) *հողի պիպ*՝ դասակարգման հիմնական միավոր, որը բնութագրվում է հողագոյացման ռեժիմներով և գործընթացներով պայմանավորված հատկությունների ամբողջությամբ և հիմնական գենետիկական հորիզոնների միասնական համակարգով.

3) *հողի ենթասարիս*՝ տիպի սահմաններում դասակարգման միավոր, որը բնութագրվում է գենետիկական հորիզոնների համակարգի որակական տարբերություններով և մեկ այլ տիպի փոխարկումը բնութագրող վերադիր գործընթացների դրսևորմամբ.

4) *հողի տարատեսակ*՝ դասակարգման միավոր, որը հաշվի է առնում հողերի բաժանումն ըստ ամբողջ հողային կտրվածքի հատիկաչափական կազմի.

5) *հողի գենետիկ հորիզոն*՝ հողագոյացնող գործընթացի ազդեցության արդյունքում առաջացած հողային կտրվածքի յուրահատուկ շերտ.

6) *հողային կտրվածք*՝ գենետիկորեն կապակցված գենետիկ հորիզոնների ամբողջություն, որը ձևավորվում է հողագոյացման գործընթացում ձեռք բերվող ձևաբանական հատկանիշների հետևանքով.

7) *հողի խտություն*՝ առանց բնական կազմությունը խախտելու վերցված հողի չոր զանգվածի հարաբերությունն է վերցված հողի ծավալին (տ/մ<sup>3</sup>).

8) *հողի բերրիություն*՝ սնուցման տարրերի, խոնավության ու օդի նկատմամբ բույսերի պահանջը բավարարող և դրանց բնականոն կենսագործունեության պայմաններն ապահովող հողի ունակություն.

9) *հողի բերրի շերտ*՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

10) *հնարավոր բերրի ապարներ*՝ բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական և (կամ) ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ.

11) *հողի հնարավոր բերրի շերտ*՝ հողային կտրվածքի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է հնարավոր բերրի ապարների հատկություններին.

12) *հումուս*՝ հողի օրգանական նյութ, որը բույսերի սննդառության հիմնական տարրերի բարդ խառնուրդ է և գոյանում է բուսական ու կենդանական մնացորդների կենսա-

քիմիական փոփոխություններից, ինչպես նաև օրգանիզմների կենսագործունեության արգասիքների քայքայման արդյունքում.

**13) խսիսրված հողեր՝** առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

**14) հողի կապիտնային փոխանակության ունակություն՝** կատիոնների առավելագույն քանակն է, որը հողում կարող է գտնվել փոխանակվող վիճակում.

**15) խիստ քարքարոտ և խճացված հող՝** հող, որի մեկ հեկտարում մակերեսի քարերը հասնում են 200-400 խոր. մետրի, վարելաշերտերում՝ 600-800 խոր. մետրի, իսկ 30-60 սմ շերտերում՝ 650-1200 խոր. մետրի.

**16) շար խիստ քարքարոտ և խճացված հող՝** հող, որի մեկ հեկտարում մակերեսի քարերն անցնում են 400 խոր. մետրից, 0-30 սմ շերտերում հասնում են 850 խոր. մետրի, իսկ 30-60 սմ շերտերում անցնում են 1200 խոր. մետրից.

**17) ողողվածության աստիճան (թույլ, միջին, խիստ)՝** որոշվում է հողային կտրվածքում էրոզիայի արդյունքում չքայքայված գենետիկ հորիզոնների առկայությամբ:

### III. ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Հողի բերրի շերտի հանման նորմերը որոշվում են՝ ելնելով հողի բերրի շերտի բաղադրությունից և հատկություններից՝ սույն պահանջներին համապատասխան: Հողի բերրի շերտը հանվում է հողային խոշորամասշտաբ քարտեզների և լաբորատոր հետազոտությունների տվյալների հիման վրա:

5. Հողի շերտը բերրի չի համարվում, եթե պարունակում է արդյունաբերական և կենցաղային թափոններ, շինարարական աղբ, ռադիոակտիվ տարրեր, ծանր մետաղներ, պեստիցիդների մնացորդային քանակներ և այլ վտանգավոր ու թունավոր միացությունների

այնպիսի քանակություններ, որոնք գերազանցում են հողում՝ դրանց համար սահմանված սահմանային թույլատրելի չափաքանակները:

6. Հողի բերրի շերտի բաղադրության ցուցանիշներն են՝ հողի բերրի շերտի և հնարավոր բերրի շերտի հումուսի զանգվածային մասը, հողի ջրային մզվածքի pH-ը, փոխանակային նատրիումի զանգվածային մասը, ջրում լուծվող թունավոր աղերի զանգվածային մասը և հողի բերրի շերտի (0,1 մմ-ից փոքր) հողային մասնիկների զանգվածային մասը, որոնց նկատմամբ կիրառվում են հետևյալ պահանջները՝

1) հումուսի զանգվածային մասը (տոկոս) հողի բերրի շերտի ստորին սահմաններում, ըստ բնական գոտիների, համապատասխանում է N 1 աղյուսակում ներկայացված նորմերին.

Աղյուսակ N 1

Գոտու անվանումը	Հողերի տիպերը	Հումուսի զանգվածային բաժինը (տոկոս)
Անապատային	բոլոր	0.5 - 1
Կիսաանապատային	կիսաանապատային գորշ, ոռոգելի մարգագետնային գորշ, պալեոհիդրոմորֆ, կապակցված, ալկալիացած, աղուտ-ալկալի	1-ից ոչ պակաս
Չոր տափաստանային	շագանակագույն	2-ից ոչ պակաս
Տափաստանային	սևահողեր, մարգագետնասևահողային, գետահովտադարավանդային	2-ից ոչ պակաս
	հողագրունտաներ	1-ից ոչ պակաս
Անտառային	անտառային գորշ, ճմակարբոնատային, դարչնագույն	2-ից ոչ պակաս
Լեռնամարգագետնային	լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային	2-ից ոչ պակաս

2) հողի բերրի շերտի աղային մզվածքի pH-ի մեծությունը կազմում է 5,5-8,2, իսկ լեռնային գոտիների հողերում ջրային մզվածքի pH-ը կազմում է 4,0-ից ոչ պակաս,

3) փոխանակային նատրիումի զանգվածային մասը (տոկոս) հողի կատիոնային փոխանակման ունակության կազմում համապատասխանում է N 2 աղյուսակում ներկայացված նորմերին.

## Աղյուսակ N 2

Հողերի և դրանց խառնուրդների տիպերը	Փոխանակային նատրիումի զանգվածային մասը (տոկոս)
Սևահողեր, մուգ շագանակագույն հողեր, շագանակագույն հողեր, մոխրագույն հողերի աղուտների հետ առաջացող խառնուրդներ	5-ից ոչ ավելի
Պակաս հումուսացված սևահողերի թույլ և միջին աղուտացված տարատեսակներ, գորշ հողեր, չոր տափաստանային և կիսաանապատային գոտիների հիդրոմորֆ, կիսահիդրոմորֆ հողեր	10-ից ոչ ավելի
Անտառատափաստանային և անապատային գոտիների հիդրոմորֆ հողերի թույլ և միջին աղուտային տարատեսակներ	15-ից ոչ ավելի

4) հողի բերրի շերտում ջրում լուծվող թունավոր աղերի զանգվածային մասը (տոկոս) չի գերազանցում հողի զանգվածի 0,25 տոկոսը: Ոռոգվող տարածքների հողի բերրի շերտում ջրում լուծվող թունավոր աղերի պարունակության թույլատրելի սահմանը կարող է մեծացվել մինչև 0,5 տոկոս:

5) հողի բերրի շերտի 0,1 միլիմետրից փոքր հողային մասնիկների զանգվածային մասը 10-75 տոկոս է, իսկ ողողադաշտային, հնահունային, գետաբերանային ավազաններում և մերձջրանցքային ավազային նստվածքներում՝ 5-10 տոկոս:

7. Հողի բերրի շերտի հանման նորմը համապատասխանում է N 3 աղյուսակում ներկայացված նորմերին:

## Աղյուսակ N 3

Հողային գոտիները	Հողերի տիպերը և ենթատիպերը	Բերրի շերտի հանման խորությունը (սմ)
Կիսաանապատային	կիսաանապատային գորշ	10-30
	ոռոգելի մարգագետնային գորշ	30-80
Չոր տափաստանային	շագանակագույն	30-40
Տափաստանային	սևահողեր	50-120
	մարգագետնասևահողային	60-100
	գետահովտադարավանդային	40-120
Անտառային	անտառային գորշ	20-80
	ճակարբոնատային	20-40
	դարչնագույն	20-80
Լեռնամարգագետնային	լեռնամարգագետնային	30-80
	մարգագետնատափաստանային	20-70

8. Հողի բերրի շերտի հանման նորմա չի սահմանվում

1) խիստ խճացված, խիստ և շատ խիստ քարքարոտ, թույլ, միջին և խիստ ողողված ճմանոխրահողային, գորշ անտառային, մոխրագույն և անտառային բաց մոխրագույն հողերի համար.

2) միջին և խիստ ողողված անտառային մուգ մոխրագույն, մուգ շագանակագույն, ճմակարբոնատային և մոխրագույն հողերի համար.

3) 10 սմ-ից պակաս բերրի շերտ ունեցող հողերի համար:

9. Հողի բերրի և հնարավոր բերրի շերտի հանման նորմերի հաշվարկը՝

1) հողի բերրի և հնարավոր բերրի շերտի հանման նորմը ( $\mathcal{N}$ )՝ արտահայտված խոր. մետրով՝

ա) մեկ հողային կոնտուրի դեպքում հաշվարկվում է 1-ին բանաձևով՝

$$\mathcal{N} = \mathcal{H} \times \mathcal{U} \quad (1),$$

որտեղ՝

$\mathcal{H}$ -ն հողի բերրի շերտի հանման խորությունն է (մ),

$\mathcal{U}$ -ն հողի հանվող բերրի շերտի հողային կոնտուրի մակերեսն է ( $\text{մ}^2$ ),

բ) հողային կոնտուրների խմբի դեպքում՝ հաշվարկվում է 2-րդ բանաձևով՝

$$\sum \mathcal{N}_i = \mathcal{H}_1 \times \mathcal{U}_1 + \mathcal{H}_2 \times \mathcal{U}_2 + \dots + \mathcal{H}_i \times \mathcal{U}_i \quad (2),$$

որտեղ՝

$\mathcal{H}_1, \mathcal{H}_2, \dots, \mathcal{H}_i$ -ն հողի բերրի շերտի հանման խորություններն են (մ),

$\mathcal{U}_1, \mathcal{U}_2, \dots, \mathcal{U}_i$ -ն հողի հանվող բերրի շերտի կոնտուրների մակերեսներն են ( $\text{մ}^2$ ).

2) հողի բերրի և հնարավոր բերրի շերտերի հանման նորմը ( $\mathcal{N}$ )՝ արտահայտված տոննայով՝

ա) մեկ հողային կոնտուրի դեպքում հաշվարկվում է 3-րդ բանաձևով՝

$$\mathcal{N} = \mathcal{H} \times \mathcal{U} \times \mathcal{G} \quad (3),$$

որտեղ՝

$I$ -ն բերրի շերտի հանման խորությունն է ( $m$ ),

$U$ -ն հողի հանվող բերրի շերտի հողային կոնտուրի մակերեսն է ( $m^2$ ),

$\Gamma$ -ն հողի բերրի շերտի խտությունն է ( $t/m^3$ ),

$p$ ) հողային կոնտուրների խմբի դեպքում հաշվարկվում է 4-րդ բանաձևով՝

$$\sum U_i = I U_1 \times \Gamma_1 + I U_2 \times \Gamma_2 + \dots + I U_i \times \Gamma_i \quad (4),$$

որտեղ՝

$I_1, I_2, \dots, I_i$ -ն հողի բերրի շերտի հանման խորություններն են ( $m$ ),

$U_1, U_2, \dots, U_i$ -ն հողի հանվող բերրի շերտի կոնտուրների մակերեսներն են ( $m^2$ ),

$\Gamma_1, \Gamma_2, \dots, \Gamma_i$ -ն հողի բերրի շերտի խտություններն են ( $t/m^3$ ):

#### IV. ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Գծային կառույցների, մելիորացիայի համար նախատեսվող օբյեկտների շինարարության դեպքում՝ հանված հողի բերրի շերտն օգտագործվում է առանց դրա պահպանման՝ շինարարության հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացման և դրանց հարող, ցածր բերրիություն ունեցող հանդակների բարելավման համար:

11. Ավազային մեխանիկական կազմ ունեցող հողերից պահպանման, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների հողայնացման և խախտված հողերի կենսաբանական ռեկուլտիվացման նպատակով բերրի շերտը հանվում է միայն մշակովի կամ մշակովի դարձված տարածքներից:

12. Հողի բերրի և հնարավոր բերրի շերտը հանվում է տարանջատված: Հողի հանված բերրի շերտն օգտագործվում է փոքր արդյունավետություն ունեցող հանդակները հողայնացնելու և խախտված հողերի կենսաբանական ռեկուլտիվացման համար, իսկ հնարավոր բերրի շերտը՝ միայն խախտված հողերի կենսաբանական ռեկուլտիվացիայի համար:

13. Հողային աշխատանքներ կատարելիս՝ հողի հնարավոր բերրի շերտը հանվում է հնարավոր բերրի ապարներից առանձին:

14. Հողի բերրի շերտը հանվում է տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Նախքան բերրի շերտը հանելը՝ կատարվում են հողի մակերեսից կոճղերի, թփերի և խոշոր քարերի մաքրման նախապատրաստական աշխատանքներ:

#### V. ՀՈՂԻ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

15. Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:

16. Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

17. Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոտեղանակներով:

18. Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:

19. Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ